

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

Ա. Է ԶՄԻԱԾՆԵ

Ա. ՅԱԿԱԲԻ ՆԵՐՍԻՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵԼԱԿԱՆ

Պաղտատի նախկին առաջնորդ Գեր. Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան օգտուելով Ամենայն Հայոց Հայրապետի պատուիրակ Գեր. Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի էջմիածին վերադարձի առիթէն՝ յանձնեց պատուիրակին Ա. էջմիածնի անուան Պաղտատցիներէ նուէր տրուած երկու եպիսկոպոսական զգեստ արծաթաթել ծնուազործ կտորներէ կարուած, նուէրուած Ա. էջմիածնին Պաղտատի բարեպաշտ տիկիններէն.

Տիկ. Աստղիկ Խոկէնտէր Մարգարեանէ շորջառ մը. — Տիկ. Մաղիկ Արգար Յովհաննէսեանէ շորջառ մը. — Տիկ. Ելիզէ Մինաս Մինասեանէ հմիփորոն եւ զգեստի միւս մասերը :

Իր կողմէ պատուիրակին յանձնեց նոյն-պէս եօթ եպիսկոպոսական մատանիներ յանձնելու համար Վեհափառ Հայրապետին, որպէս նուէր Ա. էջմիածնին :

Բացի վերոյիշեալ նուէրներէն Տ. Ռուբէն Արքեպս. Մանասեան Երուսաղէմի Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի միջոցաւ իր կողմէ նուէր ղրկեց Երեւանի Կոնդ Թաղի Ա. Յովհաննէս Եկեղեցին քահանայական մետաքսեայ զգեստ մը իր մասերով եւ սեղանի մեծ սադափէ խաչ մը Ա. Յովհաննէս Եկեղեցւոյ խորանին համար :

Վերոյիշեալ բոլոր նուէրները Պատրիարքական Տեղապահ Գեր. Տ. Եղիշէ Արքեպս. Տէրտէրեանի եւ Գեր. Տ. Վահան Արքեպս. Կոստանեանի միջոցաւ յանձնուած են ըստ պատկանելու:

● Բշ. 1 Հոկտ. — Յիշատակ Մեռելոց. Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յակոբեանց Մայր Տաճարի Ա. Գլխազրի մատրան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Վարեգին Արքեղայ Դաղանձեան: Յետ Ո. Պատարագի Միարանութիւն եւ Ժողովուրդ թափոր կազմած, Նախագահութեամբ Գեր. Տ. Առուբէն Ա. Եպս. Քէմհանձեանի, այցելեցին գերեզմանը Երշանկայիշատակ Տ. Կիւրեղ Ա. Պատր. Հօր, և ապա հին կրատան ու Զամթաղի գերեզմանավայրերը, ուր կատարուեցան հանգստեան կարգեր:

● Կիր. 7 Հոկտ. — Ա. Պատարագը մատուցուեցաւ Ա. Յարութեան Տաճարի մեր վերնայարկ մատրան մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Զաւէն Արդ. Զինչինեան:

● Ուր. 12 Հոկտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին Նախատօնը պաշտըւեցան Ա. Քաղաքիս Դպտոց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ, Նախագահութեամբ Գեր. Տ. Նորայր Ա. Եպս. Պողաբեանի:

● Եր. 13 Հոկտ. — Ա. Քէրգայ Զօրավարին. Ա. Պատարագը մատուցուեցաւ Դպտոց Ա. Գէորգ Եկեղեցւոյն մէջ: Պատարագին էր Հոգ. Տ. Վարուժան Արքեղայ Դաղանձեան: Քարոզեց Հոգ. Տ. Հայկասեր Վազ. Պայրամեան, բնաբան ունենալով տեթէ ոք կամիցի գալ զինի իմ, ուրասցի զանձն իւրեց: Յետ Ա. Պատարագի Հոգ. Վարդապետ Հայրեց պատուասիրուեցան Դպտոց Հոգ. Տեռէչն: Հանդիսաւոր Երթ ու զարձին կը նախագահէր Գեր. Տ. Նորայր Ա. Եպս. Պողաբեան:

Յետ Միջորէի ժամը 2-30ին, Գեր. Եպիսկոպոսունք և Հոգ. Վարդապետ Հայրեց, Գլխաւորութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր. իշան Ա. Յարութեան Տաճար: «Հրաշափառ»ի հանդիսաւոր մուտքէն և Ա. Գերեզմանի ուխտէն ետք, թափորը Ա. Գերեզմանին շուրջանակի զառնալով բարձրացաւ Բ. Գողգոթայի Հայամատուոր, ուր տեղի ունեցան Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին մեծահանգստ Նախատօնակը:

● Կիր. 14 Հոկտ. — Տօն Վարազայ Ա. Խաչին. առաւտեան ժամը 6ին, Միարանութիւնը գլւխաւորութեամբ Գեր. Տ. Սուրէն Ա. Եպս. իշան Ա. Յարութեան Տաճար: Գողգոթայի մատրան այցելութիւնն յետոյ առաւտեան ժամերգութիւնը կատարուեցաւ մեր վերնամատուուն մէջ: Ժամը 8ին, պաշտօնական թափորով Տաճար մուտք գործեց Գեր. Տեղապահ Ա. Հայրը: Հանդիսաւոր Ա. Պատարագը Քրիստոսի Ա. Գերեզմանին վրայ մատոյց Գեր. Տ. Սուրէն Ա. Եպս. Քէմհանձեան, որ նաև քարոզեց բնաբան ունենալով «Այլ ինձ քաւլցիս պարծիլ, բայց միայն ի խաչ Տեղան Մերոյ Ցիսուսի Քրիստոսի»: Յետ Ա. Պատարագի Միարանութիւնն և Ժողովուրդ Հանդիսաւոր զնացքով վերագարձան Մայրավանք:



● Կիր. 21 Հոկտ. — Ս. Պատարազը մատուցուեցաւ Ա. Ցակորեանց Մայր Տաճարին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Օշական. Արդ. Մինասեան:

● Ուր. 26 Հոկտ. — Երեկոյեան ժամերգութիւնն ու վաղուան տօնին Նախատօնակը կատարուեցան Ա. Ցակորեանց Մայր Տաճարին մէջ: Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր:

● Շր. 27 Հոկտ. — Ա. Թարգմանչաց Վարդպապեացն. Հանդիսաւոր Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Ցակորեանց Մայր Տաճարին մէջ: Պատարազին էր Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան, որ և խօսեցաւ կուռ քարոզ մը պանծացնելով մարգմանիչներու հոյլին անմեռ յիշատակը: Յետ Ա. Պատարազի, Նախագահութեամբ Գեր. Տեղապահ Ա. Հօր, կատարուեցաւ Հանդիսաւոր Հոգինանգտեան պաշտօն, Ա. Աթոռոյ մեծանուն բարեբար վասմ: Գալուստ Քէյ կիւլպէնիկի անի ծնողաց հոգուոց ի հանգիստ:

Այսօր ըլլալով նաև օր անուանակոչութեան Գեր. Տեղապահ Ա. Հօր, յետ Ա. Պատարազի բովանդակ Միաբանութիւնը և ուսանողութիւնը բարձրացան պատրիարքարան ի չնորհաւորութիւն: Գեր. Տեղապահը ընդունեց և պատուասիրեց զիրենք պատրիարքարանի փոքր զահին մէջ, Այսօր Գեր. Տեղապահ Հօր հետզհետէ չնորհաւորութեան եկան Ա. Աթոռոյ պաշտօնէութիւնը, ուսուցչական կազմը և զանազան ազգայիններ:

Խակ Ա. Պատարազի երգեցողութիւնը կատարեցին Ա. Թարգմանչաց Վարժարանի երկեսու Փոքրիկները, զեկայիշարութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արդ.

● Կիր. 28 Հոկտ. — Ա. Պատարազը մատուցուեցաւ Ա. Ցարութիւնն Տաճարի մեր վերնամատութիւնին մէջ: Պատարազին էր Արժ. Տ. Արշակի Թահնաւայ Անուանաւ:

Պ Ա Շ Տ Ս Օ Ն Ա Կ Ա Ր Ն Ք

● Քչ. 9 Հոկտ. — կ. ա. ժամը 9ին, Ամերիկայի Մայրավանք ժամանեց Ա. Աթոռոյ Ամերիկայի Խուրիակ Հոգ. Տ. Աթոռովէ Վրդ. Մանուկեան: Հոգ. Հայրութիւրը վասնքի աւագ զրան առջել ընդունեցաւ վարդապետ Հայրերէ և ուսանողութեան կողմէ, ու առաջնորդուեցաւ Մայր Տաճար, կատարելու իր ուխուց: Ազաւ առաջնորդուեցաւ պատրիարքարան ուր ընդունուեցաւ Գեր. Տեղապահ Հայրէն և Գեր. Եպիսկոպոսներէն և եղան ողջագուրութիւն փախազարձ չերմազին արտայայտութիւններ:

— Այսօր Սիւրիա-Լիբանանէն Մայրավանք վերադարձաւ նաև Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Արքահամեան: Հոգ. Հայրութիւրը Պատ. Տնօրին Ժողովոյ հրահանանով՝ մերկնած է, ժողովաւորաց վարժարանին համար նոր աշակերտներ զոնելու պարտականութեամբ, ինչ որ կատարած է յաջողութեամբ: Կը սպասուի աշակերտներու մօտաւուտ ժամանումին:

— կ. ա. ժամը 9.30ին, Անկիլքան Եպիսկո-

պոսը Գեր. Տ. Մտուարթ, Ընկերակցութեամբ հպիսկոպոսարանի երկու երէցներուն, այցելեց Գեր. Տեղապահ Ա. Հօր, չնորհաւորելու զինք և երկու նորապատկեպուները:

● Եշ. 18 Հոկտ. — Այս առաւօտ, Գեր. Տեղապահ Ա. Հայրը, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Սերովէք Վրդ. Մանուկեանի, Ամմանի զծով Պէյրութ մեկնեցաւ ի տեսութիւն վերսունազարդ Տ. Տարեգին վեհ և ամուսինունին, և վերազարձաւ Գչ. 24 Հոկտ. ի կ. ա. ժամը 11ին:

● Բչ. 29 Հոկտ. — Յորդանանի Հաշիմական թագաւոր ն. մ. Թալալ Ա. ի Երուաղիմ առաջին պաշտօնական այցին առթիւ, ի շարու Երուաղէմի զանազան կրօնապետներուն, մեր կողմէ զիմաւորութիւն զացած էր Գեր. Տ. Առաքէն Ա. Եպս. Քէմաձեանան, Ընկերակցութեամբ Հոգ. Տ. Հայրիկ Վրդ. Այսանեանի, նոյն օրը անոնք ներկայաց գոնուեցան նաև, Ալ-Զահրա պանդոկի մէջ ի պատիւ վեհ և թագաւորին տրուած հաշիբորյթին:

Օ Ր Տ Ծ Ո Ւ Խ Մ Բ Ո Խ Թ Ե Ս Ո Ւ

Ա. Ա Մ Է Լ Ե Ծ Բ (Խ Մ Ա Ց Է Լ)

Ա. Գ Է Ո Ծ Գ Ա Ծ Ա. Ա Ծ Կ Ն Ք Ի Ւ

Ամենէն ժողովրդային տօնախմբութիւններէն մէկն է անիկա, ինչպէս անցեալ տարիներուն այս տարի ևս, Ա. Դէօրգայ տօնին առիթով վանքը այցելեած են բազմաթիւ հայ ու խառաւորներ, իսրայէլի բոլոր քաղաքներէն:

Ցատկապէս տօնախմբութեան համար, Ա. Աթոռէն զրկուած էին Հոգ. Տ. Ցարութիւն Վրդ. Մուշեան և Հոգ. Տ. Գարեգին Արդ. Գալգաննեան: Հօն գտնուած են նաև իսրայէլէն, և աֆայի Տեղուէ Հոգ. Տ. Բարգէն Վրդ. Ապատեան և Հայֆայի Հոգ. Հովիւ Տ. Տրդատ Վրդ. Գէղողէրեան:

Ակսելով Ուր. 12 Հոկտ. էն, կատարուած են եռօրեայ (Ուր. Շր. Կիր.) պաշտամունք, Ժամերգութիւն, Ա. Պատարազ և մատաղ օրհնութիւնները: Հոգ. Հայրէրը կարգաւ պատարազած և քարոզած են ի մսիթարութիւն հայ ատացակալ ժողովուրդին:

Ա Ե Ր Ա Բ Ա Ց Ո Խ Մ Ա . Ա Թ Ա Ռ Ա Ծ Ս

Ա. Ա Ր Ճ Ա Բ Ա Ր Ա Ն Ե Խ Ե Ր Ա Ծ Խ

Ա. — Ե Ր Ա Խ Ս Ո Ղ Ղ Է Ւ

Ա. — Ժ Ա Ռ . Վ Ա Բ Ժ Ա Բ Ա Ծ Խ Ե Խ Ծ Ա Ծ Ո Շ Ա Ծ Ա Ծ Ո Ւ

Բչ. 8 Հոկտ. — կ. ա. ժամը 8ին, Գեր. Տեղապահ Արքավանը, Ընկերակցութեամբ Գեր. Եպիսկոպոսներու, ժողովական և ուսուցիչ վարդապետ Հայրէրու, պաշտօնական թափօրութ, իջաւ ժողովաւորաց վարժարան, որու մեծ զարգասին առջև զիմաւորուեցաւ վարժարանի ուսուցչական կազմէն, բարեչնոր սարկաւագներէն և աշակերտութիւններէն վարժարանի բայլերգով թափօրը յառաջացաւ դէղի մեծ հանդիսաբանէ ուր:

կատարուեցաւ Ա. Աւետարանէն և Նարեկէն ընթերցումներ։ Ազա խօսք առաւ Գեր։ Տեղապահ Արքազանը, առաջի իր պատգամը ուսանողութեան և ուսուցչական կազմին։ Վարժարանի ուսուցչական կազմին թիւն է 12, որոնցի ութիւնը վարդապետ հայրեր են։

Բ. — Ա. ԹԱՐԴՄԱՆ Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Ժառանգաւորաց վարժարանի բացման հանդէն ետք, Գեր։ Տեղապահ Արքազանը նոյն թափորով՝ առաջնորդուեցաւ Ա. Թարզմանչաց վարժարան։ Մուտքին զիմաւորուեցաւ վարժարանի առժ. Տեսուչ Հոգ. Տ. Յարութիւն Վրդ. Մուշեանի զիմաւորութեամբ ուսուցչական կազմին իսկ վարժարանի հանդիսաւորանի մէջ կը սպասէն աւելի քան 600 երկուս աշակերտներ։

Փաքրիկներու կողմէ երգուած Տէրունական Ազգօթքէն յետոյ՝ Գեր, Տեղապահ Ա. Հայրը տուած իր օրհնութիւնն ու պատգամը ուսուցչական կազմին և բովանդակ աշակերտութեան։

Բացման արարողութենէն ետք, Գեր։ Տեղապահ Ա. Հայրը և Միաբանութիւնն, հիւրասիրուեցան վարժարանի Տեսչարանին մէջ։

Ա. Թարզմանչաց վարժարանի ուսուցչական կազմին թիւն է 20, անոնցի ութիւնը վարդապետ հայրեր են, որոնք տնտեսական զժուարին կացութեան այս օրերուն յանձն առած են ձրիաբար ժառայել հաստատութեան։

Ժառանգաւորաց և Թարզմանչաց վարժարաններու Տեսութիւնը՝ Ամերիկայէն վերադարձին, ստանձնած է Հոգ. Տ. Արքովք Վրդ. Մանկեան։

Բ. — Ա. Ա. Ա. Ա.

ՀԵ ԹՈՒՄԵ Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա. Ա.

Առաք. Ա. Արուեյն

Դ. Զ Հոկտեմբեռ առաւտուն տեղի ունեցաւ Ամմանի Հեթումեան վարժարանի բացումը, ի ներկայութեան ուսուցչական կազմին և աշակերտութեան։ Միահամուռ երգուած և արտասնուած աղօթքներէ յետոյ խօսք առաւ վարժարանի ժբաշան Տեսուչը՝ Հոգ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկիսան, որուն վերաբացումի պատշաճ խրատականէն յետոյ՝ խօսք առաւ հիւրաբար ներկայ գտնուող Հոգ. Տ. Կորիւղ Արքազանը, թելազրելով բոլորին, ամէն տեսակի հատուածական նկատողութիւններէ զերծ սէր և նուիրում, հանդէկ Հայ ժողովուրդին, Հայ ներկեցիին և Ա. Յակոբեանց Առաքելական Ս. Աթոռին։

Ներկայ տարեցըանի սկիզբը երկան աշակերտութեան թիւն է 250։ Արձանագրութիւնները աւարտած չըլլալով, ոյոյն թիւը տակաւին կնայ աւելնալ, իսկ ուսուցչական կազմին թիւն է 13։

Գ. — Ա. Ա. Ա. Ա. Ա.

Անզր Յորդանանեան սոյն զիւղակին մէջ ունինք 20 տօւննոց փոքրաթիւ Հայութիւն մը, իրենց սեփական մատուռ-վարժարանով։

Վարժարանը ունի 30 երկուեր փոքրիկներ, որոնց ուսուցչունին է 0ը. Ազապի Գարլանեան, իսկ Հ. Բ. Բ. Միասնաթիւնը տարեկան որոշ նպաստ մը յատկացուցած է սոյն ծաղկոցին։

Գիւղակին կրօնական և կրթական հոգը յանձնւած է Ամմանի հոգ. Հովհիսին, որ պարբերար կ'այցելէ զիւղակ ընթացք տալու համար անոնց պարական, կրթական զործերուն և հոգեոր միխթութիւններով միխթարած էին տեղույն հայութիւնը։

Խոկ անցեալ ամիս Ա. Աթոռի կողմէ յատկապէս զրկուած էին չորս սարկաւազներ և խումբ մը աշակերտութիւնն, զիւարութեամբ Հոգ. Տ. Վարդուման Արք. Գալուարանեանի, որոնք եռօրեայ արարողութիւններով միխթարած էին տեղույն հայութիւնը։

Դ. — Ա. Ա. Ա. Ա. Ա.

Պազեստինեան պատերազմի հետեւ անքով իսրայէլի հայութիւնը իր մէկ հինգակիցին իշած ըլլալով, փակուած են եափայի և Հայփայի մեր վարժարանները, ատոնց փոխարէն այսօր Հայփայի և Աթլիթ էկս հայաբնակ զիւղին մէջ, Ա. Աթոռիս հովանաւորութեան ենթակայ երկու նազկոցներ կան, որոնք ևս այս տարի վերացուեցան։

ՔՈՀԱՆԱԿԱՆ ԶԵՐԱԾԳՐՈՒԹԻՒՆ ՆԻԿԱՌԻՑ ՄԷՋ

Հոկտ. 21ին, նիկոսիոյ Ա. Աստուածածին եկեղեցւոյն մէջ, կիպրոսի Արժանընտիր Առաջնորդ Գեր. Տ. Ղեռնդ եպս. Զէպէյեան, կատարած է Քահանայական ձեռնազրութիւնը, Տիար Ռաֆայէլ Աւագեանի, վերակոչելով զայն Տ. Վարդան Քհնյ.,

Մասնաւոր գոհունակութեամբ վերահսուեղանք այս լուրին, ոչ միայն անոր համար որ Տ. Վարդան եղած է 25 տարիներու պաշտօնեան արդինաւոր Ա. Յակոբեանց Տպարանին, այլ նաև Տ. Վարդան իր զարգացումով, իր կենցաղավարութեամբ և այլ կարգի բարեմասնութիւններով կը ներկայանայ իրեւ արժանաւոր անձնաւորութիւնը մը Քահանայական Ա. Կոչումին։

Տ. Վարդան ծնած է Բաղէլ 1908ին, իրեւ մեծ եղեռնի արհաւիրքներէն ազատած մանուկ կը վայելէ պաշտօնանութիւնը Արաբատեան որբանոցին, ապա կ'աշակերտի Ա. Աթոռիս Ժամանակաւորաց Վարժարանին, ուր ուշազրութեան առարկայ կ'ըլլայ իրեւ ուշիմ և Մշաման աշակերտ։ 1926էն ասդին կը պաշտօնավարէր Ա. Աթոռոյս տպարանին մէջ որպէս զրաշար և տպագրի։

Թող Տէրը առաջնորդէ զինք իր կեանքի այս նոր ասպարէզին ու մեծ կոչումին մէջ, ըլլալու համար «Մշակ առանց ամօթոյ» Հայց. Ա. և Առաքելական նկեցւոյ։

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.

Editor - Father Hagop Vartanian. Armenian Convent, Jerusalem.

Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.